ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«11» մարտի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու 15 անդամներից՝ Նորայր Սանթրոսյանը, Հայկ Վարդանյանը, Լուսինե Երիցյանը, Գոռ Մարկոսյանը, Գայանե Մելքումյանը, Արթուր Պապանյանը, Վարսենիկ Բլեյանը, Արկադի Գևորգյանը, Հուսիկ Գրիգորյանը, Կարինե Մարտիրոսյանը, Գասպար Բաղդասարյանը, Քյալո Հասոյանը, Մետաքսյա Մարգարյանը, Գրիշա Կոբալյանը, Աննա Մարտիրոսյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

Արձանագրող՝ Արմինե Պետրոսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են՝ Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանը, Ջովք գյուղի վարչական ղեկավար Նորիկ Գևորգյանը,աշխատակազմի աշխատակիցներ, «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Գրիշա Գևորգյանը:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Ջրվեժ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
3. Ջրվեժ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:
4. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
5. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի N 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
7. Համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 3-ի N 141-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8. Համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի N 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
9. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
10. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
11. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
12. Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 11-ի՝ վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի հետևյալ օրակարգը.

1) Ջրվեժ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2) Ջրվեժ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

3) Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

4) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի N 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6) Համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 3-ի N 141-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7) Համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի N 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

8) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

9) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

10)Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

11) Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով,

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Ջրվեժ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածի 6-րդ մասով,

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Ջրվեժ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հուսիկ Գրիգորյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձյան հալոցքի հետևանքով փլվել է 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Էրիկ Արթուրի Մովսիսյանի ծնողներին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ այգետարածքի 23-րդ թաղամասի թիվ 19 հասցեում գտնվող այգետնակի պարիսպից մի հատված, որի վերականգնման նպատակով մայրը՝ Մերի Ալադինի Հարությունյանը, դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Մերի Ալադինի Հարությունյանի ընտանիքի սոցիալական վիճակի մասին,

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի սեփականության 2024 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-3 հավելվածների, դուրս գրման ենթակա գույքի ցուցակը՝ համաձայն N 4 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

5. ԼՍԵՑԻՆ - ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Համաձայնություն տալ Ջրվեժ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2.Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՕԳԻՏԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Աշխատակազմի գլխավոր մասնագետ Օգիտա Ղուկասյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդանյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կամավոր խնդիրները սահմանելու և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 4-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված NN 1,2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն NN 1,2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ(Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գասպար Բաղդասարյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 3-ի «Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 141-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշմամբ հաստատված Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագիծը» բառերը փոխարինել «2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 100-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ (Ջրվեժ, Ձորաղբյուր և Ձովք բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը» բառերով,

2) որոշման նախաբանում և որոշման 1-ին և 3-րդ կետերում «բնակավայրերի հասարակական» բառերը փոխարինել «բնակավայրերի բնակելի» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

8. ԼՍԵՑԻՆ – ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 18-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գասպար Բաղդասարյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերով և հիմք ընդունելով Մարտին Ալբերտի Գևորգյանի կողմից ներկայացրած իր անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15112024-07-0080 վկայականը, գրանցված 2024 թվականի նոյեմբերի 15-ին,

ՈՐՈՇՎԵՑ –1.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի «Հողամասը և ավտոտնակը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին» N 18-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

9. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ԳՐԻԳՈՐ ՍԵՐՈԲՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Քյալո Հասոյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «ԷՅ ԷՄ ԹԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի հունվարի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0121-0040 կադաստրային ծածկագրով 180,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 2 հասցեի 800,0 քառ.մետր և 44-րդ փողոցի թիվ 2/1 հասցեի 1000,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի սեփականատեր Վահագն Կարենի Բարսեղյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13102021-07-0071 և 13102021-07-0008 վկայականներ, տրված՝ 2021 թվականի հոկտեմբերի 13-ին) խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0121-0040 կադաստրային ծածկագրով 180,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0121-0040 կադաստրային ծածկագրով 180,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի այլ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Վահագն Կարենի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 2 հասցեի 800,0 քառ.մետր և 44-րդ փողոցի թիվ 2/1 հասցեի 1000,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերին կից, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0121-

0040 կադաստրային ծածկագրով 180,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի այլ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, կադաստրային արժեքով, որը կազմում է 1 900 896 (մեկ միլիոն ինը հարյուր հազար ութ հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, օտարել Վահագն Կարենի Բարսեղյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

10.ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ԳՐԻԳՈՐ ՍԵՐՈԲՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ – Աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Արթուր Պապանյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Միքայել Լևոնի Հակոբյանի կողմից 2025 թվականի հունվարի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0210-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 50,34 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական տարածքի 4-րդ թաղամասի թիվ 3 հասցեի 503,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր «ՎՈՒԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Ռազմիկի Սաֆարյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20122022-07-0181 վկայական, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 20-ին) խնդրանքը, ինչպես նաև Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 5 հասցեի 1459,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Ռազմիկ Ժորայի Սաֆարյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14112022-07-0152 վկայական, տրված՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ին) համաձայնությունն այն մասին, որ իր հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 07-057-0210-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 50,34 քառ.մետր մակերեսով հողամասն օտարվի այն փաստացի տիրապետող և օգտագործող «ՎՈՒԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, տնօրեն Արթուր Ռազմիկի Սաֆարյան,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0210-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 50,34 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0210-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 50,34 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ «ՎՈՒԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, տնօրեն Արթուր Ռազմիկի Սաֆարյան, սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 2 հասցեի 800,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, կազմակերպության կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0210-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման

հողամասից 50,34 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, կադաստրային արժեքով, որը կազմում է 529 265 (հինգ հարյուր քսանինը հազար երկու հարյուր վաթսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, օտարել «ՎՈՒԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, տնօրեն՝ Արթուր Ռազմիկի Սաֆարյան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

11. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0064 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 18,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 15,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Սուսաննա Ռաֆիկի Զալինյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0064 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 18,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 15,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0064 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 18,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 15,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Սուսաննա Ռաֆիկի Զալինյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0064 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 18,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 15,2 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Սուսաննա Ռաֆիկի Զալինյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 299 268 (երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր վաթսունութ), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 48 732 (քառասունութ հազար յոթ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՅԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի ապրիլի 11-ը, ժամը 17:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 15
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ
ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ
ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԳՐԻՇԱ ԿՈԲԱԼՅԱՆ
ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Արձանագրող՝ *Ա.Պետրոսյան*